

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ առողջապահության նախարարի 18.08.94 թ. հրամանով ստեղծված մասնագիտական հանձնաժողովը հետևյալ կազմով՝ ՀՀ առողջապահության նախարար Ա. Բաբլոյան (նախագահ), ՀՀ ԱՆ բուժկանխօգնության, գիտության վարչության պետ Գ. Սայադյան, ՀՀ ԱՆ 4-րդ գլխավոր չության պետ Ս. Դիլանյան, Օնկոլոգիայի ԳՀԻ-ի տնօրեն, պրոֆեսոր Հ. Գալստյան, ՀՀ ԱՆ գլխավոր պաթանատոմ, պրոֆեսոր Ա. Ալավերդյան, թերապևտ, պրոֆեսոր Ռ. Մամիկոնյան, նևրոպաթոլոգ, պրոֆեսոր Է. Գևորգյան, ՀԱԿ-ի տնօրեն, բժշկական գիտությունների թեկնածու Ա. Երեմյանց, բժիշկ-քիմիոթերապևտ, դոցենտ Լ. Հայրապետյան, բուժող բժիշկ Կ. Գուլյան, տվել է հետևյալ մասնագիտական եզրակացությունը Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Առաջինի մահվան վերաբերյալ:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Առաջինը 1978 թվականից տառապում էր խրոնիկական լիմֆոլեյկոզով:

Մշտապես լինելով բժշկական հսկողության ներքո և ստանալով համապատասխան բուժում, գտնվում էր կայուն ռեմիսիայի վիճակում: 1994 թվականին, հիվանդությունն ախտորոշելուց 16 տարի անց, նրա մոտ զարգացավ իմունոբլաստ լիմֆոսարկոմա, որի կապակցությամբ ստանում էր համապատասխան բուժում:

Վեհափառը միաժամանակ տառապում էր խորանիստ երակների խրոնիկական թրոմբոֆլեբիտով, աորտայի և սրտի պսակաձև անոթների աթերոսկլերոզով և պարենխիմատոզ օրգանների դիստրոֆիայով:

Չնայած ձեռք առնված ժամանակակից բոլոր միջոցներին, Վեհափառի վիճակը վերջին երկու ամիսների ընթացքում աստիճանաբար վատանում էր: 1994 թվականի օգոստոսի 18-ին, առավոտյան ժամը 7 անց 15 րոպեին, կյանքի 86-րդ տարում, Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Առաջինը վախճանվեց:

Մահվան պատճառն էր խրոնիկական լիմֆոլեյկոզը, իմունոբլաստ լիմֆոսարկոման:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ